# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## 12.08.2024թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԽԾՁԲ-24/04 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Ստեփանավան «19» 09. 2024թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա(այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Թովմասյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 12.08.2024թ. կնքված N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԽԾՁԲ-24/04 գնման պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն համաձայնագրով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Մեղապարտ, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու կազմման խորհրդատվական ծառայությունների մատուցման գինը կազմում է **2945000 (Երկու միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Ծառայությունները մատուցվում են սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատուցման ժամկետը է սահմանվում պայմանագրին կից համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

1.3 Պատվիրատուն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N1 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, գրված է հայերեն լեզվով ՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ**
**ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**համայնք հ/հ 900252260014**
**պետություն հ/հ 900252001020**
**ՀՎՀՀ 06954104**
**Համայնքի ղեկավար՝ Ա. Գրիգորյան**

---------------------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ԳԵՈՔԱՐՏ»ՍՊԸ**
**ք.Վանաձոր, Նալբանդյան 5/3-2**
**"ԱՄԻՕ ԲԱՆԿ" ՓԲԸ**
**հ/հ11500208394394408**
**ՀՎՀՀ06946973**
**Տնօրեն՝ Ն. Թովմասյան**

---------------------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**

*Հավելված N 1*
*«12» օգոստոսի 2024թ. կնքված*
*ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԽԾՁԲ-24/04 ծածկագրով պայմանագրի*
*« 19 » 05 2024 թ. կնքված*
*ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԽԾՁԲ-24/04 ծածկագրով համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

***Ուշադրություն :*** Վճարման ժամանակացույցում նշված 2945000 ՀՀ դրամը ամբողջ պայմանագրի գումարն է : Վճարումը պետք է իրականացվի նախ համայնքի մասնաբաժնով, որը կազմում է 1619750 ՀՀ դրամ, այնուհետև պետության մասնաբաժնով, որը կազմում է 1325250 ՀՀ դրամ:

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** 55% համայնքային բյուջե /1619750 ՀՀ դրամ/ 45% պետական բյուջե /1325250 ՀՀ դրամ/ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/504 | ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Մեղապարտ, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու կազմման խորհրդատվական ծառայություններ | | | | | | | | | | | | 2945000 | 2945000 |

*Սույն գնման գործընթացը կազմակերպվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ֆինանսավորումն իրականացվելու է համայնքային ու պետական բյուջեներից՝ համապատասխանաբար մասնաբաժիններով: Ծառայությունների մատուցման դիմաց վճարումն իրականացվելու է սկզբում համայնքի մասնաբաժնի չափով, այնուհետև ծառայությունների մնացած մասի մատուցման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց հետո իրականացվելու է ֆինանսավորում պետական բյուջեի մասնաբաժնով:*

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Մեղապարտ, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ու կազմման խորհրդատվական ծառայությունների համար՝
55% համայնքային բյուջե (1619750 ՀՀ դրամ)
45% պետական բյուջե (1325250 ՀՀ դրամ)

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ**
**հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**համայնք հ/հ 900252260014**
**պետություն հ/հ 900252001020**
**ՀՎՀՀ 06954104**
**Համայնքի ղեկավար՝ Ա. Գրիգորյան**

---------------------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ԳԵՈՔԱՐՏ»ՍՊԸ**
**ք.Վանաձոր, Նալբանդյան 5/3-2**
**"ԱՄԻՕ ԲԱՆԿ" ՓԲԸ**
**հ/հ11500208394394408**
**ՀՎՀՀ06946973**
**Տնօրեն՝ Ն. Թովմասյան**

---------------------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**